ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 13.03.2014թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳԲԽ-06/14 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-06/14 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով Ա/Ձ Նաիրի Թորոսյանի կողմից 21.02.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը, ինչպես նաև ուսումնասիրելով ԳԲԽ-06/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը պարզեց.

1. Ա/Ձ Նաիրի Թորոսյանի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին21.02.2014թ. ներկայացված բողոքով Ա/Ձ Նաիրի Թորոսյանը հայտնել է, որ 05.03.2012թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ կնքել է թիվ «ՇՀԱՊՁԲ-11/7-6» ծածկագրով համաձայնագիրը և գրանցվել որպես հնարավոր մասնակից:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից շինանյութի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի էլեկտրոնային ծանուցումը ստացել է Ա/Ձ Նաիրի Թորոսյանը: Մասնակցության դիմումը և գնային առաջարկը ներառող փաթեթը Ա/Ձ Նաիրի Թորոսյանի կողմից ուղարկվել է armeps կայքում տեղադրված տեսաերիզի ուղեցույցով:

1. Մրցույթի հարցերին առգիծ պատասխանելու ժամանակ Ա/Ձ Նաիրի Թորոսյանի կողմից չի նշվել «Տենդեր» դաշտում չափաբաժինների անունները, քանի որ ուղեցույցում այդ քայլը ներառված չէ քայլերի հերթականության մեջ:

2. Ըստ տեսանյութի քայլերի հերթականության վավերացում կոճակը սեղմելուց հետո պետք է փաթեթավորել հայտը, այն ինչ անհրաժեշտ է պահպանել վավերացման ժամանակ կատարված փոփոխությունները մինչև հայտի փաթեթավորումը, այլապես համակարգը չի ճանաչի կատարված փոփոխությունները:

3. Ա/Ձ Նաիրի Թորոսյանը նշել է, որ ավելորդ սխալներ թույլ չտալու համար կողմնորոշվել է ուղեցույցի քայլերով և բոլոր քայլերից հաջողությամբ ավարտվելու ծանուցումը ստանալով համոզվել է հայտի ճիշտ կազմման մեջ: Համակարգի թերություններից մեկն այն է, որ նույնիսկ թերի հայտի դեպքում այն տալիս է հայտը հաջողությամբ բեռնելու ծանուցումը:

Հայտի բացման վերջնաժամկետը փետրվարի 18-ին ժամը 11:00-ն էր, սակայն համակարգում հայտի բացումը վկայող դաշտը ակտիվացել է նշված վերջնաժամկետից ժամեր անց, որը հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներին:

Ա/Ձ Նաիրի Թորոսյանը հայտնել է նաև, որ էլեկտրոնային գնումների համակարգը դժվարություն է ստեղծել ինչպես հնարավոր մասնակիցների, այնպես էլ պատվիրատուի համար, խոչընդոտելով պատվիրատու-մատակարար համագործակցությունը, ինչպես նաև համակարգի թերություններից տուժել են նաև մեծ թվով այլ մասնակիցներ:

Ելնելով վերը նշված թերություններից Ա/Ձ Նաիրի Թորոսյանը գտնում է, որ խախտվել են նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով, 7-րդ հոդվածի 4.1 մասով և 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները:

Ա/Ձ Նաիրի Թորոսյանը խնդրել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգը համարելչեղյալ:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 24.02.2014թ. N 04/032-330 գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 21.02.2014թ. Ա/Ձ Նաիրի Թորոսյանի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 06.03.2014թ. N 02341գրությամբ Ա/Ձ Նաիրի Թորոսյանի կողմիցներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/2» շրջանակային համաձայնագրի միջոցով էլեկտրոնային եղանակով գնում կատարելու ընթացակարգի վերաբերյալ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը հրապարակված են գնումների պաշտոնական տեղեկագրում:

Ա/Ձ Նաիրի Թորոսյանի ներկայացրած էլեկտրոնային հայտն ընդունվել է http://www.armeps.am էլեկտրոնային կայքի կողմից և համարվել է հետագագնահատման համար ընդունելի, սակայն գնահատման ժամանակ պարզվել է, որ հայտին որևէ փաստաթուղթ կցված չէ, ուստի և հանձնաժողովը դրանք ներբեռնելու և գնահատելու հնարավորություն չի ունեցել: Հիմք ընդունելով հրավերով (ծանուցմամբ) պահանջվող որևէ փաստաթուղթ չներկայացնելու փաստը՝ հանձնաժողովը որոշել է մերժել Ա/Ձ Նաիրի Թորոսյանի հայտը:

ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտերը ուշ բացելու վերաբերյալ հայտնել է, որ այդտեղ բացակայել է պատվիրատուի մեղքը, քանի որ, նախ՝ http://www.armeps.am համակարգը հնարավորություն է տալիս հայտերի բացումն իրականացնել դրանց ներկայացման վերջնաժամկետից միայն երեսուն րոպե հետո, իսկ կոնկրետ վերը նշված ընթացակարգի ժամանակ առաջացել է այլ խնդիր, մասնավորապես՝ հանձնաժողովի առաջին բացող անդամի կողմից 11:30-ին է կատարվել «բացել հայտերը» առաջադրանքը և հաստատել է ներկայացված հայտերի ցուցակը, սակայն պարզվել է, որ հանձանաժողովի գնահատող անդամների մոտ չի առաջացել «գնահատել հայտերը» առաջադրանքը: ՀՀ ՊՆ-ն անմիջապես 18.02.2014թ. N ԴՎԱ/381 համապատասխան գրությամբ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին տեղեկացրել է խնդրի վերաբերյալ և առաջարկել է միջոցներ ձեռնարկել խնդրիրը լուծելու ուղղությամբ: Կենտրոնի մասնագետներին նույն օրը՝ մոտավորապես ժամը 21:00-ին հաջողվել է կարգավորել հարցը ևհաջորդ օրը հանձնաժողովը սկսել է հայտերի գնահատումը:

ՀՀ պաշտպանության նախարարությունը գտնում է, որ մասնակցի կողմից http://www.armeps.am կայքը թերի ուսումնասիրության արդյունքում սխալ հայտ կազմելը չի կարող հիմք հանդիսանալ ընթացակարգը չեղյալ համարելու համար, քանի որ նշված ընթացակարգին հրավերի (ծանուցման) պահանջների համապատասխան հայտ են ներկայացրել թվով տասնյոթ մասնակիցներ և ապահովվել է բավարար մրցակցություն:

3. ԳԲԽ-06/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հանձնաժողովին ներկայացրել է իր եզրակացությունը և առաջարկել է Ա/Ձ Նաիրի Թորոսյանի կողմից 21.02.2014թ. Կենտրոնին ներկայացված բողոքը մերժել:

4. ԳԲԽ-06/14 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-06/14 բողոքը քննող հանձնաժողովի հիմնավորումները և եզրահանգումները.

Հանձնաժողովն ուսումնասիրել է Ա/Ձ Նաիրի Թորոսյանի (այսուհետև՝ Բողոքաբեր) 21.02.2014թ .ներկայացրած բողոքը և բողոքին կից էլեկտրոնային կրիչը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով էլեկտրոնային եղանակով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետև՝ նաև Հրավեր), ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետև՝ նաև Պատվիրատու) Կենտրոնին 06.03.2014թ. ներկայացրած N 2341-Ն գրությունը, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի եզրակացությունը:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից շինանյութի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով էլեկտրոնային եղանակով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ կազմակերպությունների հայտ է ներկայացրել նաև Ա/Ձ Նաիրի Թորոսյանը:

Ա/Ձ Նաիրի Թորոսյանը 21.02.2014թ. Կենտրոնին ներկայացրած բողոքով հայտնել է, որ իր կողմից չի նշվել «Տենդեր» դաշտում չափաբաժինների անունները, քանի որ ուղեցույցում այդ քայլը ներառված չէ քայլերի հերթականության մեջ: Բացի այդ, հայտերի բացման վերջնաժամկետ է հանդիսացել 18.02.2014թ. ժամը 11:00-ն, սակայն «armeps»համակարգում հայտի բացումը վկայող դաշտը ակտիվացել է նշված վերջնաժամկետից ժամեր անց, ինչն ըստ Բողոքաբերի հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներին:

Բողոքաբերը հայտնել է նաև, որ Պատվիրատուի կողմից *խախտվել են «Գնումների* մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով, 7-րդ հոդվածի 3-րդ մասով և 4-րդ մասի 1-ին կետով սահմանված պահանջները՝ խնդրելով չեղյալ համարել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7-ՀՀ ՊՆ

ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգը:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 06.03.2014թ. Կենտրոնին ներկայացրած N 2341-Ն գրությամբ հայտնել է, որ Ա/Ձ Նաիրի Թորոսյանի ներկայացրած էլեկտրոնային հայտն ընդունվել է http://www.armeps.am էլեկտրոնային կայքում և համարվել է հետագա գնահատման համար ընդունելի, սակայն գնահատման ժամանակ պարզվել է, որ հայտին որևէ փաստաթուղթ կցված չէ, ուստի և հանձնաժողովը դրանք ներբեռնելու և գնահատելու հնարավորություն չի ունեցել, ինչի արդյունքում հրավերով (ծանուցմամբ) պահանջվող որևէ փաստաթուղթ չներկայացնելու հիմնավորմամբ հանձնաժողովը որոշել է մերժել Ա/Ձ Նաիրի Թորոսյանի հայտը:

Պատվիրատուն նշել է նաև, որ http://www.armeps.am համակարգը հնարավորություն է տալիս հայտերի բացումն իրականացնել դրանց ներկայացման վերջնաժամկետից միայն երեսուն րոպե հետո, իսկ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/2» ծածկագրով ընթացակարգի ժամանակ առաջացել է այլ խնդիր, մասնավորապես, հանձնաժողովի առաջին բացող անդամի կողմից ժամը 11:30-ին է կատարվել «բացել հայտերը» առաջադրանքը և հաստատվել ներկայացված հայտերի ցուցակը, սակայն պարզվել է, որ հանձանաժողովի գնահատող անդամների մոտ չի առաջացել «գնահատել հայտերը» առաջադրանքը: ՀՀ պաշտպանության նախարարությունը, անմիջապես, 18.02.2014թ. N ԴՎԱ/381 գրությամբ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին տեղեկացրել է խնդրի վերաբերյալ և Կենտրոնի մասնագետներին նույն օրը՝ մոտավորապես ժամը 21:00-ին է հաջողվել կարգավորել հարցը և հաջորդ օրը հանձնաժողովը սկսել է հայտերի գնահատումը:

ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ մասնակցի կողմից http://www.armeps.am կայքը թերի ուսումնասիրելու արդյունքում սխալ հայտ կազմելը չի կարող հիմք հանդիսանալ ընթացակարգը չեղյալ համարելու համար, քանի որ նշված ընթացակարգին հրավերի (ծանուցման) պահանջների համապատասխան հայտ են ներկայացրել թվով տասնյոթ մասնակիցներ և ապահովվել է բավարար մրցակցություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ Գնումների աջակցման կենտրոնն իրականացնում է էլեկտրոնային գնումների համակարգի սպասարկման և համակարգման գործառույթները:

Կենտրոնում Ա/Ձ Նաիրի Թորոսյանի կողմից բողոքին կից արտաքին կրիչով ներկայացված էլեկտրոնային հայտի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Բողոքաբերն էլեկտրոնային գնումների «armeps» համակարգում ներկայացրել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/2» ծածկագրով ընթացակարգի մասնակցության էլեկտրոնային հայտ, որը ստեղծվել է հայտերի պատրաստման գործիքում նախատեսված քայլերի իրականացման խախտմամբ, քանի որ չի կատարվել չափաբաժիններով ընթացակարգի համար հայտի պատրաստման մասին համակարգի «Նորություններ» բաժնում 13.09.2012թ. տեղադրված չափաբաժինների նախապես նշագրման հրահանգը, ինչի արդյունքում ստեղծվել է խոտանային հայտ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:
- 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ էլեկտրոնային ձևով հաղորդակցության համար օգտագործվելիք միջոցները, ինչպես նաև դրանց տեխնիկական բնութագրերը պետք է լինեն ոչ խտրական, ընդհանուր առմամբ մատչելի լինեն հնարավոր ցանկացած մասնակցի և փոխգործակցող՝ տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների ընդհանուր օգտագործման միջոցների հետ,
- 7-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հայտերի՝ էլեկտրոնային եղանակով փոխանցման և ստացման միջոցների նկատմամբ պարտադիր կարգով կիրառելի են շահագրգիռ մասնակիցներին մատչելի հայտերի էլեկտրոնային ձևով ներկայացման համար անհրաժեշտ հատկանիշներին (այդ թվում՝ կոդավորմանը) վերաբերող տեղեկությունները,
- 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը բացվում են հրավերում նշված պահին՝ հայտերի բացման նիստում: Հայտերի բացման օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին:

ՀՀ կառավարության 05.12.2013թ. «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգը հաստատելու մասին» N 1370-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով սահմանվել է, որ էլեկտրոնային ձևով գնումների կատարման դեպքում կիրառվում են ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի

կազմակերպման կարգի դրույթները՝ հաշվի առնելով նույն որոշման 1-ին կետով հաստատված կարգով սահմանված առանձնահատկությունները:

ՀՀ կառավարության 05.12.2013թ. N 1370-Ն որոշմամբհաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի՝

- 20-րդ կետի համաձայն՝ հայտերի բացման օրը և ժամը համընկնում են դրանք ներկայացնելու վերջնաժամկետին: Համակարգում հանձնաժողովի բացող անդամների գործառույթներն աստիճանակարգված են: Աստիճանակարգումը որոշվում է գնահատող հանձնաժողովի նախագահի կողմից: Գնահատող հանձնաժողովի առաջին բացող անդամն իր կատարած նշումներով երկրորդ բացող անդամի դիտարկմանն է ներկայացնում բացման ենթակա այն հայտերի ցուցակը, որոնց համակարգը դիտել է որպես ներկայացված (պիտանի) հայտեր, որից հետո երկրորդ բացող անդամը հաստատում է իրեն ներկայացված հայտերի ցուցակը: Հաստատումից հետո բեռնվում է հայտերի բացման մասին արձանագրությունը (համակարգում՝ հաշվետվություն), որը հայտերի բացման օրը հանձնաժողովի քարտուղարը ոչ ավտոմատ եղանակով տրամադրում է մասնակիցներին,
- 21-րդ կետի համաձայն՝ գնահատման գործընթացը կատարվում է գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ նաև Կարգ) 110-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում, որը պետք է համընկնի հրավերով սահմանված հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին, գնումները համակարգողը տեղեկատվություն է հաղորդում հայտերի գրանցամատյանում կատարված գրառումների մասին, որից հետո հանձնաժողովը՝ գնահատում է հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և բացում համապատասխանող գնահատված ծրարները: Անհամապատասխանություն հայտնաբերվելու դեպքում գնահատող հանձնաժողովը մերժում է այդ հայտերը:

www.armeps.am կայքում՝ «էլեկտրոնային հանրային գնումներ» բաժնում տեղադրված՝ Պայմանագրային պատվիրատուի և տնտեսական օպերատորի քայլերի համառոտ ձեռնարկի 4-րդ մասով նախատեսված մասնակցի կողմից գնումների էլեկտրոնային համակարգի (armeps) միջոցով շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների կատարման ուղեցույցի 7-րդ կետի և Գնումների պաշտոնական տեղեկատուում՝ http://www.gnumner.am կայքում, հրապարակված ՀՀ ֆինանսների նախարարի 10.01.2014թ. N

7-Ա հրամանով հաստատված «Էլեկտրոնային ձևով իրականացվող գնումների կատարման» ուղեցույցի 4-րդ մասով նախատեսված մասնակցի կողմից գնումների էլեկտրոնային համակարգի (armeps) միջոցով շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների կատարման ուղեցույցի 1-ին կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ եթե ընթացակարգը չափաբաժիններով է, ապա մատակարարը «Հայտեր» դաշտում ընտրում է չափաբաժինը, որին ցանկանում է մասնակցել:

Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից շինանյութի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով էլեկտրոնային եղանակով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով էլեկտրոնային գնումների «armeps» համակարգում Ա/Ձ Նաիրի Թորոսյանի կողմից էլեկտրոնային հայտը բեռնելու ընթացքում չի պահպանվել ՀՀ ֆինանսների նախարարի 10.01.2014թ. N 7-Ա հրամանով հաստատված «Էլեկտրոնային ձևով իրականացվող գնումների կատարման» ուղեցույցով սահմանված պահանջները, հետևաբար, գնահատող հանձնաժողովը, Բողոքաբերի հայտը մերժելով, գործել է իրավաչափ:

Բացի այդ, Ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետից 30 րոպե հետո հայտերի բացման առաջադրանքի ներկայացումը չի կարող պատճառ հանդիսանալ ներկայացված հայտերի պիտանի կամ ոչ պիտանի լինելու հարցում, քանի որ մինչև բացումը համակարգն ապահովում է դեռևս չբացված հայտերի անձեռնմխելիությունը, ինչպես նաև բացառում է նոր հայտերի բեռնումը հայտերի ներկայացման վերջնաժամկետից հետո:

Ինչ վերաբերում է Բողոքաբերի այն եզրահանգմանը, որ «armeps» համակարգում հայտը բեռնելու ժամանակ չափաբաժինների համարները չեն նշվել, քանի որ ուղեցույցում այդ քայլը ներառված չի եղել քայլերի հերթականության մեջ, ապա այն անհիմն է, քանի որ http://www.armeps.am կայքում մասնակիցների կողմից հայտը բեռնելու քայլերը պարունակող տեսանյութը տեղադրվել է մասնակիցներին լրացուցիչ օժանդակություն ցուցաբերելու նպատակով և այն ներկայացված է մեկ չափաբաժնով գնում կատարելու ընթացակարգի համար:

Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուի կողմից պահպանվել են էլեկտրոնային եղանակով գնում կատարելու վերաբերյալ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները:

Վերոգրյալի հիման վրա և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասը Գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Ա/Ձ Նաիրի Թորոսյանի կողմից 21.02.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը մերժել:

Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Գոռ Ենոքյան

Անդամներ՝ Լեռնիկ Խաչատրյան

Աննա Մխիթարյան